

rev. Pere G. Kalemkian
tengasee № 4
Vienne

Գրութիւնք եւ տպուիլը

ՊՈԼԻԿԱՐԻԱ
ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 12 ծր.
Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիշեկ ծրարով
Տարեկան 14 ծր.
Վեցամսեայ 7 ծր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ծր.
Վեցամսեայ 1.50 ծր.

ԿԱՆԻՍԻԿ

ԾԱՆՈՒԾՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՐ

ԼՐԱԳԻՐ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Ս. ՊԱՏՐԻԱՐԹԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՔՆՆԱԳԱՏՈՂՆԵՐՈՒՆ

Հայաստանի ընդհանուր ջարդերէն բաւական տարիներ յետոյ երբ առ երեսոյթս հանդարտութիւն մը կը տիրէր երկրին մէջ, — դռնէ խմբակուն կոտորածներէն լսուեր, այլ կառավարութիւնը խորամանկ ու լռիկ միջոցներով միայն իր հայահալած ընթացքը կը շարունակէր, ասոր մէջ ալ ինքզինք արդարացի ու պատուակ գտնելով Դաշնակցական ֆէտայիներուն անխորհուրդ շարժումը — իրաց այս վիճակին մէջ Օրմանեան Պատրիարքի պաշտօնէն չի հրաժարիլ մահահալ յանցանք մը կը նկատէին մեր յեղափոխական օւղակները և գոնի գաւաճանի կարգը կը դասէին, տեղուի եսթարկի ու աստիճանի Մինչդէռ քիչ մը լըջութեն խորհիլ գիտցողները կըրնային ըմբռնել թէ օրման բռնակալ կառավարութիւնը կամ կորսիլը համար մէկ սատուումով կարող էր Հայոց պատրիարքը իր կեցած տեղը գտնել, ինչպէս որ քանիցս ալ պատահած էր, և կամ Օրմանեանին տեղ բերել Բաթուրիմէս մը, Մետրոպ մը սոխին տեղ սխտոր տնկելուն պատակաւ, յետինն չար քան զառաջինն, Սակայն այս գիտնալով հանդերձ, Օրմանեանին անպատճառ հրաժարիլը կը պահանջէին մեր Դաշնակցական, Վերակազմեալ և Արմենական կուսակցութիւնները, պահանջ մը որ որբանոցները և վարժարաններն ալ երեսի վրայ ձգելու պատճառ պիտի ըլլար, քանզի Օրմանեան զեթ ազգին այդ հաստատութիւնները ըստ կարի կը պահպանէր:

Բայց զարմանալի և ցաւալի է որ նոյն կուսակցութեանց կիսապաշտօնական օւղակները այսօր քէր լը գահէ Դուրեան Պատրիարքի բոլորքարկու հրաժարակալին, որ կանուանեն Վերում,

պաշտօնի դժուարութենէ ընկեր կուժն ալ, (կարգալ Արմենիայի վերջին թիւերը և Դաշնակցական թերթերը) Ի՞նչու այս հակասական պահանջը ի՞նչու Օրմանեանը հրաժարի ընդունելով, նախորդ բռնակալութեան տակ միմէսեանի կարեւորութիւն կը ստանար Պատրիարքի մը բողոքարկու հրաժարականը քան այսօր երբ Վիտա Ստուպոյն սահմանադրական ռեժիմի մը տակ կապրինք, նոր ռեժիմը որ արդարութեան և հաւատարմութեան սկզբունքին վրայ հիմնուած պիտի ըլլար, միմէս, նուազ անարդարութեան և նուազ զրկանք կը գործէ, քան նախորդը: Հին ռեժիմի անուն Ստուպոյն պէյի մը որ քանի մը հայ սպաննել տուերէր, անպարտ արձակումը բոլոր ազգը տակն ու վրայ, բայց հիմա 25000 — 30000 հայ ջարդեւորուող պատախանայտու պաշտօնեաներու (կուսակալ կառավարիչ խորհրդական, հրամատար ևսպայ) անպարտ արձակուիլը և խաղաղութիւնը վերահաստատելու համար զրկուած զինուորներուն, ամէնասուկալի ջարդը կտտարելը և պատախանայտու չը ընտելիլ միմէս նուազ գալթակեցուցիչ են քան Մուսա Պէյի մը անպարտ արձակուիլը, Այս անպատախանայտութիւնը աւագակը գէթ այն ատեն արդար զրկուեցաւ Հիճազ բայց 25 — 30 հազար հայ ջարդեւորուող և ամբողջ գիւղեր ու քաղաքներ հրդեհող պաշտօնեայ — սրիկաները ազատ համաձայնութեայ մէջ կը պտրտին այսօր, իսկ ջարդը արգելող պաշտօնեաներ պաշտօնէ կը հանուին Սահմանադրական կոչուած կառավարութեան հրամանաւ Արդարութեան անունով խօսող բայց զայն խաբէր հանող կառավարութեան այս ընթացքին հանդէպ

3 — 4 ամիս շարունակ բողոքել և անլսելի մնալէ յետոյ ի՞նչ կը մնար ընել Հայոց Պատրիարքին ուղղու ընդունով մը իր վերջին միջոցին, հրաժարականին գիմելէ զատ:

Կը հարցնենք Դուրեան Ս. Պատրիարքի հրաժարութիւնը քննադատողներուն, Հայոց Պատրիարքարանը աւելի ազդեցիկ ի՞նչ գէնք ունի քան Պատրիարքին բողոքելով հրաժարիլը:

Կըսեն թէ բողոքելով հրաժարիլը հին մտաւ է եղեր, Հապապարտներն նոր Մօսկա ո՞րն է միմէս այն որ դուք ի գործ դըրիք, Պատրիարքին ուժը, հրաժարականին ազդեցութիւնը կտտրելու գնով այդ թուրք կառավարութեան ղեկավար մարմին հեա՝ «նոր դաշինք» կը քննելու և ատուցոյց տալով թէ հայ ժողովուրդը համակարծիք չէ Պատրիարքին, Ձեր այդ «նոր դաշինք» ինչ բացառական արդիւնքը ահա այսօր մէջ տեղն է, դուք կընար անոր մէկ գործակալ արգելելը ցոյց տալ:

Բարեզի Գոնիմէին մասնակցող և ազատութիւնը բերող պարտններ, ձեր այդ պոռնատխտութեան ի պատասխան Ատանայի հին և երիտասարդ թուրքերը ալլըն սիդէ ատալէր, ալլըն սիդէ հոնքրիյէր գոչելով վրէժխնդրական գնդակներ տրձակեցին հայոց դէմ, Ձեր Բարեզի գոնիմէին օրոշումներուն համակերպելով (?) Սահմանադրութիւն հաշկող Բուժէրի բանակին զինուորներն էին որ էն ահուելի ջարդը ընէին Ատանայի մէջ, ձեր հետ համարորդ ուժը «եղբայրացող» ժէօն թիւրք կուսակցութեան գօմիթէներն էին որ Կիլիկիայ մէջ քանի քանի տեղեր ջարդեւորութիւն տրիչը ու ղեկավարը եղան, բուն թեւադիրները ոչնչու արձակու և կարգ մը անմեղ հայեր դատապարտող պատերազմական ատեանները կազմակերպու և հրահանգողներն ալ միմէս ժէօնէրու այն պետերը չէին որ ձեր հետ ծուռ զինուորի նստան Բարեզի գոնիմէին մէջ և վերջին անգ

դամն ալ ձեզ թեւադրեցին «նոր դաշինք» կը քննելու և հրատարակելու Պատրիարքին հրաժարականին հետեւել օրը, և այդ ժէօն թիւրքերու խմբազերները չէին որ այդ «նոր դաշինք» իրենց ձեռք գէնք ըրած համոզեցին թանի և թայնի խմբագիրները «տեղէր» հայ ժողովուրդը մեր հետն է, միայն պատրիարքը և իր մէկ քանի համախոհներն են որ դժգոհութիւն կը յայտնեն իրենց, Այս ամէն ոճիւրներէն, խաբէութիւններէն և յուսախաբութիւններէն յետոյ ալ ի՞նչ միջոց կը մնար Հայոց Պատրիարքին իր բողոք — հրաժարականին վրայ պնդելէ զատ, բողոք մը որ բողոք ազգին տմեկտարրական մէկ պահանջը կը ներկայացնէ, այն է պատժել կոտորածի թեւադիրները ու կազմակերպիչները, Այս բողոքը չի լսել նորանոր կոտորածներու համար բաց դուռ, քրդէ և Եւ իրաց այս վիճակին մէջ երբէք չի բաւականացող սին խոստումներէ կրկին խաբուելով ի՞նչու հայոց պատրիարքը իր Աթոռ վերադառնայ, իր ազգը բողոքները իր քաղաքները մեղա միւսեր ալլըն ըլլալէ վերջ միմէս սիւսի համար Պատրիարք պիտի մնայ:

Եթէ հիմա ալ օրօրօր իր (համակերպում) պիտի ծառայենք, դուք ո՞վ նախկին յեղափոխականները, այսօր Սահմանադրական սահաշատ օրերուն մէջ որ անխոհեմութիւն կը համարէր Պատրիարքին բողոքը հրաժարականին վրայ պնդելը, անդրադարձէ քան դամ մը ձեր երէկին և տեսէք թէ ո՞րչափ կը հակասէք դուք ձեզի:


Յ. Դուրպիք

ԱՂԳԱՅԻՆ

— Այդ, Երեսի ժողովը իր վերջին նիստին մէջ կրիւն զարկելով Երեսադատի ծանօթ ինքնու, հետեւեալ Շարունակութիւնը հրդեհ:

ՆԱԾ ԶԳՆԱԺԱՄԵՐ ԵՒ

ԳԽԵՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ



Համայնարանական եւ մեր նախ-
կին տնտեսականներէն Տ. Մ. Ան-
նիկեան Ամերիկայի Կոչնակ շարաթա-
թերթին մէջ աւելցրաւ յօդուած մը
գրածէ Տօքթ. Մ. Ս. Դարբինեանի
«Հայկական ձգնաժամն» անուն ծա-
նօթ երկասիրութեան մասին Տ. Մ.
Աննիկեանի այդ յօդուածէն հետեւ-
եալը կտրուած է:

«Հայկական ձգնաժամն»ը
խիստ քննադատութեան մը
կ'ընդունէր Հայ յեղափոխականու-
թիւնը եւ մասնաւորաբար կը
վերլուծէր Դաշնակցական հոգե-
բանութիւնը: Չորս տարիէն ա-
տի Դաշնակցութիւնը բաւական
ձեւափոխութիւններէ քննադատ, այն-
պէս որ իր ծրագիրներէն եւ կա-
պակցութիւններէն դատելով
այսօր այնքան կը նմանի իր ան-
ցեային որքան բաթիկ մը գինք
զարուանկող հաւկիթին: Եւ սա-
կայն այս հոլովոյթը Դաշնական եւ
արամաբանական եղած է իր ամ-
բողջ ընթացքին մէջ: Ինչպէս
«Հայկական ձգնաժամն» կը ցու-
ցնէ. Դաշնակցականութիւնը եղեր
նական սինիքութեամբ մը կը
խաղար Հայ կեանքին եւ ազգա-
յին հետ: Իր թմբկահարած
ձեւերովները եղեւնագործ խի-
զախութեամբ մը ամբողջ հայա-
բնակ գաւառներ փճացումի կը
մատենէին: Ի՞նչ ահաւելի ճգնա-
ժամ էր որմէ անցան Սասուն եւ
Վասպուրական, վերջին տարիներ-
ուն մէջ: Իրեն գործիչները Հայ
գիւղացիներէն կ'ընտելան, Հայ
նեկան կեանքը կը սրբազորէին
«Եւրոպայի» ի տէրութի գիւղային
մէթոտներով, ոչ միայն Հայ ան
հատներու անունին եւ կեանքին
գէտ կը դաւաճանէին, այլ նաեւ
ամէն ազգասիրական շարժում եւ
զործ խեղդելու կը ճգնէին: Այն
տոնէն իսկ իրենց միտումը չէր
Հայ գաղութը պաշտպանել, այլ իր-
ենց «կայսրութեան» մէջ կայս-
րութիւնի փրփուի զօրացը-
նել:

«Մէկ երկու տարի վերջ, Հ. Յ.
Դաշնակցութիւնը, ընկերվարա-
կանութեան գիրկը կը նետուէր
առանց զգալու թէ ատ Հայ դա-
տը սպաննել էր այն գիւղացի-
տութեան առջեւ, որուն օգնու-
թիւնը կ'ուզէր բռնադատել յի-
մար եւ ապիկար ընդլայնելով
առանց նշմարելու թէ գաւազար
գային ոգին զոր ընկերվարակա-
նութիւնը կը մշակէ եւ կը շահա-
գործէ: այն զօրաւոր թիւերուն է
որուն մէջ ազգային գոյութիւնը
ընտ կը լուծուի:

«Այսօր նոյն Հայապաշտպան
կուսակցութիւնը «ձուլում» քա-
ղաքականութեան ներքեւ կը գնէ
իր ստորագրութիւնը: Միւս
օրոքն կը ջանայ փութացնել

Հայ ազգին մահը անոր ընտանե-
կան կապերը կտրտելով, վանքե-
րը կողոպտելով, կաղժակերդու-
թիւնները քայքայելով եւ կրօն-
քը հարուածելով, «Հայկական
ձգնաժամն» չէր կրնար Դաշնակ-
ցութեան այս ընթացքը այն ա-
տենէն իսկ մանրամասնօրէն ու-
րուագծել: Բայց ան իր մատը կը
դնէր բուն սաղմին վրայ որմէ
այս հրէշութիւնները ծնան եւ
դեռ ուրիշ հրէշութիւններ տլ
պիտի ծնին: Յաւալին ան է որ
երբ Հայ ազգը հաղիւ բաւական
ուժ ունի իր արտաքին հարցե-
րով զբաղելու, ան այսօր կ'ստիպ-
ուի իր վտիտ մարմնոյն մէջ
ճարակող որդերու հետ ալ պայ-
քաբելու:

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԳՈՐԾԵՐԷՆ

ԹՐԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Ժամանակի մէջ կը կարգանք թէ
Պրուսայի շրջակայները, առէ ինը
ամիս առաջ, չորս հարի որսի
կնիւն, ճամբան իսկ մը Թուրքի-
այնոնք շրջապատելով զենքերին
կանոն, բայց այդ հայերէն մէկը
առանց զենք յանձնելու փախչի
կը օկսի, այլ աւել Թուրքի-
այնի հրացանի գնդակը զանի գե-
տին կը տապալէ: Ոճրագործը դա-
տարան կը յանձնուի ուր 3 հո-
յերը կը վկային թէ իրենց ընկե-
րը գնդակար մեղքողը այն
թուրքն է: Օսմ. սահմանադրական
արդարադատ դատարանը (°) ազատ
եւ անպարտ կարծակէ այն մար-
դապետ թուրքը, Հին բարբարոս
դարերու մէջ կապրինք, ուր ըստ
չէրի իսլամ մը գաղապարտելու
համար արժէք չունէր քրիտոնէից
վկայութիւնը: Կնցէ Օսմ. Սահ-
մասադարութիւնը . . .

ԲՈՒՐԻՔ ՈՍՏԻԿԱՆԸ

Պոլսոյ Եւսէ — Գալէի թաղին
ոստիկաններէն Վէմալ եւ Ճէմալ
նոյն թաղին մէջ հայու մը տունը
կը մտնեն գիշերանց, եւ վեց-
հարուածեան քուլով մահուան
սպանութիւն տակ իրենց տափա-
քը կը դռնանեն սարսափէն մա-
րած դեռատի հայ օրիորդի մը վը-
րայ: Նոյն տունը գտնուող փոք-
րիկ տղայ մը, թեւեւ ուշ, բայց
վերջապէս կրնայ տունէն դուրս
սը պրդիլ եւ դրախները օգնութեան
կոչել, որով ոճրագործները տակա-
ւին տունէն չի մեկնած ոստիկա-
նութիւնը կը հասնի եւ կը ձեռ-
բակալէ Ճէմալը ու Գէմալը, Հե-
տեւեալ օրը հարձակումներ ենթա-
կը կատարուին, եւ բոլորները դի-
տակաւնապէս կը հաստատեն հայու
հին կուսութիւնը նոր խզում
ըլլալը, հակառակ Գէմալին զրպար
տութեանը թէ ինք վաղուց ի վեր
յարաբերութիւն ունեցած է այդ
աղջկան հետ:

Այս ահուկի ոճրին հերոսները
իրենց այդ շահատակութեան պատ-
ճառաւ պաշտօնէ վտարուեցան կը-
սէ Բիզանդիոն եւ կաւեցնէ «Ման-
րակչի» պարագայ մէջ նաեւ որ
այս գոնիկ ոճրագործները ոստի-

կանական նորահաստ վարժարանին
առաջին շրջանաւարտներն են: Տի-
պար ոստիկանութիւն, արժանի
թուրք գաւիթին եւ Գոթիլին,
որոնց ապակեղեցին անպատու-
թիւնը հայ սպաննողին, թալան-
դին եւ հայուկներ պղծողին:

ՀԱՅՈՐՄԱՆԵՐԸ

Գէտապէ (Կիլիկիա) կը գրեն թէ
տեղայն ծրանշիկեան կրօնաւորնե-
րը արկածախնդրուն քոթնելու հա-
մար Պոլսոյ նպատակը միջազգային
Յանձնաժողովին ղրկած գրածով
200 հոգի լատինացեաց են: Յայտ-
նի է թէ շատ տեղերէ հայեր
իրենց նպատակները ղրկած էին
այդ միջազգային Յանձնաժողովին
իր վստահելի մարմին, որ փո-
խանակ ուղղակի Հայերու ղրկելու
իր ընդունած նպատակները, թուրք
պաշտօնեաներու եւ ալլաղաւան
բորժակաւորութիւններու կը ղրկէ շատ
անգամ, եւ այդ շնորհիւ Առանայի
վային հայ օրերը թրջացնելու
նպատակաւ օրբանօց կը հաստատէ եւ
ուր ոչ քրիստոնէութիւն եւ ոչ
հայ լէզու: Ուսուցանել կարածն է
անդին լատին կրօնաւորներն ալ
այն դրամով զոր հայը առած է
հայ արկածախնդի համար, Հայեր
կրօնաւոր, կոտորածներ:

Մենք այս տողերով նպատակ
միջազգային Յանձնաժողովի ուղղա-
մունքները կ'ստանանք: Եւ զի
չենք ուզեր, այլ այս գէպքերը յի-
շելով, կը ղգանք մեր ազգա-
յիններուն թեւելի լու կընեն եթէ
իրենց նպատակները մեր ազգային
պատրիարքարան ղրկեն ուղղակի:

ՆԱԾ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

- Մանրաշեանի
Նորիստոնոսթիանները
1. Սուրբ Էջմիածնի Մայր Ծա-
նարի նորոգութեանը համար
40,000 ռուբլի:
 2. Թիֆլիզի վանքի աւագ ե-
կեղեցւոյ նորոգութեանը համար
40 000 ռ:
 3. Թիֆլիզի Ներսիսեան հոգե-
ւոր դպրանոցի նոր շինութեան
կառուցման համար 20,000 ռ:
 4. Թիֆլիզի վաճառականական
Մանթաշեան դպրոցը 5 դասա-
րանէ բաղկացած՝ անոր հաշուով
է կառուցուած եւ կը պահպանուի
անոր հաշուով:
 5. Թիսուն ուսանող որդեգիր-
ներ՝ Ռուսաստանի եւ արտասահ-
մանեան բարձրագոյն դպրոցնե-
րը:
 6. Բարիզի Հայոց եկեղեցւոյ
շինութիւնը, որ արժէք է մօտ
1,000,000 ֆրանք:
 7. Քսան հազար ռ. նուիրած է
անշափահա՝ յանցաւորներու,
Հաճեալեան արհեստանոցներու
եւ ընականներու շինութեան:
 8. Կովկասի Հայոց Բարեգործա-
կան Ընկերութեան 20,000 ռ:
 9. Ցանկահայոց օովեալներուն
եւ տանկահայ գաղթականներու,

դանազան ժամանակներու մէջ
մօտ 25,000 ռ.:

Հայկական Միոսթիան
Հայկական Միութիւնը հետեւ-
եալ նպատակները ղրկած է.
Մարաշ, Մկրտիչ Արքեպ. Վե-
հապետեանի Անգլ. Ոսկի 100.
Հաճեալ, Ներսէս Վարդ. Դանի-
էլեանի Ա. Ո. 100.
Մուշ, Ներսէս Վարդ. Խարա-
խանեանի Ա. Ո. 50.
Ջէյթուն, Վաղարշակ Վարդ.
Արշակունիի Ա. Ո. 50.
Ատանա. Պոլսոյ Եպիսկ. Թերզ-
եանի Ա. Ո. 50.
Ասկէ զատ Միութիւնը ղրկած
է 100 անգլ. ոսկի Միացեալ Ըն-
կերութեանց գիւղատնտեսական
եւ արհեստագործական դասըն-
թացքներու յատկացուելու նը-
պատակաւ, ինչպէս նաեւ 100 ան-
գլ. ոսկիի գումար մը զանազան
կարևոր թերթերու:

Ինչպէս յայտնի է, Հ. Բ. Ը.
Միութիւնը ընդունած է նաեւ
քաջալերել այն ամէն ձեռ-
նարկները կամ ինքնատարակու-
թիւնները որ իր նպատակին ի-
րագործմանը եւ ընդհանուր առ-
մամբ ժողովուրդին բարօրութեա-
նը կը նպաստեն:

ՅՕՐԷԼԵԱՆ ՄԸ

Մշակի խմբագրապետ Ա. Գա-
լանթարեանի գիւղատնտեսական
30 — ամեայ դործունէութեան յօ-
բելեանը տօնուեցաւ անցեալ օր
Կովկասեան Կայսրական Գիւղա-
տնտեսական ընկերութեան նա-
խագահութեամբ: Յօբելեարը
Կովկասի մասնաւորապէս հայ
գիւղերու մէջ գիւղատնտեսական
գիտելիքներ տարածելու դժուար
ին գործին աշխատել է 30 տա-
րի թէ խօսքով, թէ՛ գրչով եւ
թէ՛ գործքով:

Յայտնի է թէ Ա. Գալանթարի
գործունէութիւնը այդ ժամանա-
կամիջին մէջ չի սահմանափակ.
ուր միայն գիւղատնտեսութեան
գործիչի դերին մէջ, այլ նա.
Գալանթարեանը, իբրեւ Մշակի
խմբագրապետ եւ ազգային դո-
ժիչ կարևոր ծառայութիւններ
մատուցած է ընդհանրապէս հայ
ազգին եւ մասնաւորապէս կովկա-
սահայուն: Ուրախ ենք յորդ-
ջը շնորհակալ իսկ լաւագոյնս գը-
նահատած են անոր ծառայու-
թիւնները:

Մեր սրտաղին խնդակցու-
թիւնը, շնորհաւորութիւնը եւ
բարեմախթութիւնները որ հայ
ազգը բարեաղղութիւնը ունե-
նայ պատուական Յօբելեարին
ընդհանուր ղ դործունէութեան
Յիսնամեակը եւ տօնելու:

文淵閣

Հետեւեալ գիրքերը:

ՂԱՐԻՊ ԱԽՊԷՐ	գին 1. ֆր
ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ	» 1. »
ԹԻԱՊԱՐՏ Ա. Հատոր	» 1-50 »
ԹԻԱՊԱՐՏ Բ.	» 2. ֆր
ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ	» 1.10 »
ԻՐԱՆՈՒՆԻՔԻ ՀԱՆԱՔԱԾՈՅ	» 12 ֆր



